Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 3/3.8-1/5145-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի ապրիլի 20-ի N 02/2438-12, Հայաստանի Հանրապետության աշխարհաբանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի ապրիլի 20-ի N ՖԲ/ԱՆՄ-5/2872-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 18-ի N ԱԱ/3-4/3454-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 2400000 դրամ ընդհանուր արժողությամբ «Գյումրու «Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի սպորտային դահլիճի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):


2. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական
 կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
 տնօրեն՝ **Գրեհեմ Սթրոնգի** կողմից
 «...02...» 2012թ

**Գյումրու Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատության
 սպորտային դահլիճի վերանորոգում**

ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Բարելավել Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությամբ աշակերտների ֆիզիկական դաստիարակության և կրթության պայմանները												
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:												
3	Բարեգործը	Վորլդ Վիժն ԱՄՆ գրասենյակ, հասցե՝ 34834 Վենիսուելա Վեյ Սաուր, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռախոս՝ 1-888-511-6548												
4	Ծրագիրը կատարողը	Ծրագիրն անմիջականորեն կատարողն է հանդիսանում Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռոմանոս Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755):												
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն: Բնագավառը՝ կրթական:												
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 2 400 000 դրամ												
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացողն է ՀՀ Շիրակի մարզ Գյումրու «Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը, ՀՎՀՀ 05512609, որն ընտրվել է հաստատության աշակերտական խորհուրդի դիմումի համաձայն												
8	Ծրագրի իրականացման տևողությունը	01 ապրիլ 2012- 25 սեպտեմբեր 2012												
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<table border="1"> <thead> <tr> <th>Միջոցառումների նկարագրությունը</th><th>Ժամկետները</th><th>անհրաժեշտ ֆինանս. միջոցներ</th></tr> </thead> <tbody> <tr> <td>Բաց մրցույթի կազմակերպում և վերանորոգման աշխատանքներն իրականացնող կապալառուի ընտրություն</td><td>01 ապրիլ 2012թ.- 30 ապրիլ 2012թ.</td><td>չի պահանջվում</td></tr> <tr> <td>Կապալառու կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում</td><td>02 մայիս 2012թ.- 20 մայիս 2012թ.-</td><td>չի պահանջվում</td></tr> <tr> <td>Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատության սպորտային դահլիճի վերանորոգում</td><td>20 մայիս 2012թ. – 01 սեպտեմբեր 2012</td><td>2 400 000 դրամ</td></tr> </tbody> </table>	Միջոցառումների նկարագրությունը	Ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ	Բաց մրցույթի կազմակերպում և վերանորոգման աշխատանքներն իրականացնող կապալառուի ընտրություն	01 ապրիլ 2012թ.- 30 ապրիլ 2012թ.	չի պահանջվում	Կապալառու կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում	02 մայիս 2012թ.- 20 մայիս 2012թ.-	չի պահանջվում	Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատության սպորտային դահլիճի վերանորոգում	20 մայիս 2012թ. – 01 սեպտեմբեր 2012	2 400 000 դրամ
Միջոցառումների նկարագրությունը	Ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ												
Բաց մրցույթի կազմակերպում և վերանորոգման աշխատանքներն իրականացնող կապալառուի ընտրություն	01 ապրիլ 2012թ.- 30 ապրիլ 2012թ.	չի պահանջվում												
Կապալառու կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում	02 մայիս 2012թ.- 20 մայիս 2012թ.-	չի պահանջվում												
Գյումրու երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատության սպորտային դահլիճի վերանորոգում	20 մայիս 2012թ. – 01 սեպտեմբեր 2012	2 400 000 դրամ												

10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և մախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում մախատեսվող վերանորոգման աշխատանքների ամբողջ ծավալը կիրականացվի մրցույթով ընտրված մասնագիտացված շինարարական կազմակերպության կողմից, որի հետ կկնքվի համապատասխան կապալի պայմանագիր, 2 400 000 դրամ մախատեսվող արժեքով (ակնկալվում է գործարքի շրջանակներում ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում): Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են 1 գիշերօթիկ հաստատության սպորտային դահլիճի (ընդհանուրը 216քմ մակերեսով) վերանորոգում, մասնավորապես՝ նոր էլեկտրասնուցման և լուսավորության համակարգի տեղադրում, պատերի և առաստաղի գաջի շերտի վերականգնում, պատերի և առաստաղի ներկում,
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր մախատեսված չեն:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ծրագիրն իրականացնելու է ՀՀ Շիրակի մարզպետարանի և Գյումրու բաղադրապետարանի հետ համագործակցությամբ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրերի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի «Վորլդ Վիժն» Հայաստանի կենտրոնական գրասենյակի և վերջինիս Գյումրու Տարածքային Չարգացման Միջոցի գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատության համայնքի հետ համատեղ կիրականացնեն վերանորոգման աշխատանքների կանոնավոր մոնիթորինգ: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային ատլիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:

Գրահամ Սթրոնգ

..... /..... /2012

6/9



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2012 թվականի N Մ-297-Ա
քաղ. երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱ-
ԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՀՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ
ՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 37 ԴՊՐՈՑԻ ՍԱՆՀԱՆ-
ԳՈՒՅՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 3/3.8-1/5090-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի ապրիլի 20-ի N 02/2455-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 03/07-1/3883-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 3451-ի N ԱԱ/3-4/12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 8300000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովունի գյուղի հիմնական դպրոցի նախադպրոցական խմբակի սենյակների և Գյումրի քաղաքի թիվ 37 դպրոցի սանհանգույցի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ


«02» հունիսի 2012թ.

«Շիրակի մարզի Հովուների գյուղի հիմնական դպրոցի նախադպրոցական խմբակի սենյակների և
Գյուլմարի քաղաքի թիվ 37 դպրոցի սանհանգույցի վերանորոգում»

ԾՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	Բարելավել Շիրակի մարզի Հովուների գյուղի դպրոցի և Գյուլմարի թիվ 37 դպրոցի աշակերտների կրթության պայմանները
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	Վորլդ Վիժն ԱՄՆ գրասենյակ, հասցե՝ 34834 Վենիսուելա Վեյ Սաութ, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռախոս՝ 1-888-511-6548
4	Ծրագիրը կատարողը	Ծրագիրը անմիջականորեն կատարողն է հանդիսանում Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռոմանոս Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755):
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ Շիրակի մարզ, Հովուների գյուղի հիմնական դպրոց և Գյուլմարի թիվ 37 ավագ դպրոց: Բնագավառը՝ կրթական:
6	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 8 300 000 դրամ
7	Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացողներ են ՀՀ Շիրակի մարզի «Գյուլմարի թիվ 37 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ը, ՀՎՀՀ 05511665 և ՀՀ Շիրակի մարզի «Հովուների հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը, ՀՎՀՀ 05803147, որոնք ընտրվել են հաստատությունների ծնողական խորհուրդների դիմումի համաձայն
8	Ծրագրի իրականացման տևողությունը	01 ապրիլ 2012- 25 սեպտեմբեր 2012

9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Միջոցառումների նկարագրությունը	Ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ
		Բաց մրցույթի կազմակերպում և վերանորոգման աշխատանքները իրականացնող կապալառուի ընտրություն	01 ապրիլ 2012թ.- 30 ապրիլ 2012թ.	չի պահանջվում
		Կապալառու կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում	02 մայիս 2012թ.- 20 մայիս 2012թ.	չի պահանջվում
		Գյուլմարի թիվ 37 դպրոցի սանհանգույցի և Հովուների գյուղի դպրոցի նախադպրոցական խմբակի դասասենյակների վերանորոգում	20 մայիս 2011թ - 01 սեպտեմբեր 2012	8 300 000 դրամ
10	Չեղք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում նախատեսվող վերանորոգման աշխատանքների ամբողջ ծավալը կիրականացվի մրցույթով ընտրված մասնագիտացված շինարարական կազմակերպության կողմից, որի հետ կկնքվի համապատասխան կապալի պայմանագիր, 8 300 000 դրամ նախատեսվող արժեքով (ակնկալվում է գործարքի շրջանակներում ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում): Թիվ 37 դպրոցի սանհանգույցի վերանորոգման արժեքը կազմում է 2700000 դրամ, իսկ Հովուների գյուղի դպրոցի նախադպրոցական խմբակի դասասենյակների վերանորոգման արժեքը՝ 5600000 դրամ: Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելու են հետևյալ աշխատանքները • Գյուլմարի թիվ 37 դպրոցի սանհանգույցի (ընդհանուրը 18.5քմ մակերեսով) վերանորոգում, մասնավորապես՝ նոր միջնորմ պատերի կառուցում, պատերի և հատակի սալիկապատում, պատերի և առաստաղի ներկում, նոր լվացարանների, գուգարանակոնքերի և դռների տեղադրում, նոր ջրագծերի և կոյուղագծերի տեղադրում • Հովուների հիմնական դպրոցի 2 դասասենյակների (ընդհանուրը 84 քմ) և նրանց կից սանհանգույցի (9 քմ մակերեսով) վերանորոգում, մասնավորապես՝ հին միջնապատերի փոխարինում նորով, նոր պատուհանների և դռների տեղադրում, հատակի լամինապատում պատերի և առաստաղի ներկում, սանհանգույցի սալիկապատում, նոր լվացարանների, գուգարանակոնքերի տեղադրում, նոր ջրագծերի և կոյուղագծերի տեղադրում		
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:		
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ծրագիրն իրականացնելու է ՀՀ Շիրակի մարզպետարանի և Գյուլմարի քաղաքապետարանի հետ համագործակցությամբ:		
13	Ծրագրի արդյունավետության գնահատման վերահսկողության մեխանիզմների ներդրությունը	Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի «Վորլդ Վիժն» Հայաստանի կենտրոնական գրասենյակի և վերջինիս Գյուլմարի Տարածքային Ջարգացման Ծրագրի գրասենյակի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը թիվ 37 դպրոցի և Հովուների դպրոցի ծնողական խորհուրդների հետ համատեղ կիրականացնեն վերանորոգման աշխատանքների կանոնավոր մոնիթորինգ: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:		

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի գործառնությունների ղեկավար
Շադիկ Մարուկյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2012 թվականի N Մ-298-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԴԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 3/3.8-2/5131-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի ապրիլի 18-ի N ՀՔ/22/3387-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 18-ի N ԱԱ/3-6/3394-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) միջոցով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականիսարգելման ծրագրի շրջանակներում ստացված լաբորատոր պարագաների (2 տեղ, 20 կգ ընդհանուր քաշով, 1430.29 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 484.46 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2012 թվականի N Մ-299-Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 3/3.8-2/5128-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի ապրիլի 19-ի N ՀՔ/22/3420-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 19-ի N ԱԱ/3-6/3480-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային ինունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված ներարկիչների և դրանց այրման տուփերի (22 տեղ, 923 կգ ընդհանուր քաշով, 8129.12 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 1100 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2012 թվականի N Մ-300-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒՒ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ (N 1)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 3/3.8-2/5130-12, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 1/06/316-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 19-ի N ԱԱ/3-6/3476-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների համար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված տարբերանշանների (մեկ տեղ, 3.8 կգ ընդհանուր քաշով, 1955 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2012 թվականի N Մ-301-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ (N 2)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 3/3.8-2/5129-12, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 1/06/315-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 19-ի N ԱԱ/3-6/3484-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Բարեգործական որակել եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միության (UEFA) կողմից որպես օժանդակություն Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականների համար «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության հասցեով ուղարկված մարզահագուստի և մարզագույքի (17 տեղ, 157.3 կգ ընդհանուր քաշով, 2629.12 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2012 թվականի N Մ-302-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒ-
ԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի ապրիլի 18-ի N 1.3[101616]-12 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 31-ի N ԱԱ/3-6/2789-12
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի
համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական
հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասար-
դական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել
նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև
նշված բեռները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) «Լեզո» տեսակի խաղալիքների հավաքածու (20 տեղ, 110 կգ ընդհանուր քաշով,
3360.54 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 615
եվրո, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՍՊ):

2) ազդանշանային համակարգ և կահույք (12 տեղ, 412 կգ ընդհանուր քաշով,
7052.30 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել
են 1849.72 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՍՊ):

3) պրոեկտոր և համակարգչային սարքավորումներ (մեկ տեղ, 82 կգ ընդհանուր
քաշով, 4200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ
փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՍՊ):

4) մետաղական սեղաններ և աթոռներ, գրենական և գրասենյակային պիտույքներ ու
համակարգչային սարքավորումներ (մեկ տեղ, 344 կգ ընդհանուր քաշով, 15039.15 ԱՄՆ-ի
դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1541.27
ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՍՊ):

5) հատակ մաքրող սարքի պահեստամասեր (մեկ տեղ, 36 կգ ընդհանուր քաշով,
418.50 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 164400
դրամ, «Արարատյան» ՍՊ):

6) համակարգչային սարքավորումներ և պիտույքներ (3 տեղ, 32 կգ ընդհանուր
քաշով, 4552 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը
կազմել են 289000 դրամ, «Զվարթնոց» ՍՊ):

7) համակարգչային սարքավորումներ և պիտույքներ (10 տեղ, 300 կգ ընդհանուր
քաշով, 26016.40 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման
ծախսերը, «Զվարթնոց» ՍՊ):

8) անխափան սնուցման սարքեր (4 տեղ, 105 կգ ընդհանուր քաշով, 3520 ԱՄՆ-ի
դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց»
ՍՊ):

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ


Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ս տ ե դ ծ ա գ ո Ր ծ ա կ ա ն տ ե խ ն ո լ ո գ հ ա ն եր ի եր ի տ ա ս ա ղ ա կ ա ն կ ե ն տ Ր ո ն
Ծ Ր Ա Գ Ի Բ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում մրցունակ մարդկային ներուժի զարգացմանը՝ հասանելի դարձնելով Հայաստանի երիտասարդներին, ուսանողներին և արհեստավարժներին տեխնոլոգիական ռեսուրսները, ինչպես նաև ուժեղացնել հետազոտման և մշակման ուղղությունները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Սեմուել Սիմոնյան, (Անճմագիր N423050175, տրված Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից 09/05/2007թ-ին)
4.	Ծրագիրը կատարողը	Ծրագիրը իրականացվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 01245672, ՀՀ ք.Երևան, Հայաբյան 16)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Ծրագիրը իրականացվելու է ՀՀ Երևան քաղաքի Հայաբյան 16 հասցեում կառուցված շինության 5 707 քմ տարածքում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում: Ծրագիրը ուսուցանման միջոցով աշխատելու է զարգացնել աշակերտների/ուսանողների և SS մասնագետների մոտ ստեղծագործական ունակությունները և տեխնոլոգիաների համդեպ համակրանքը նպատակ ունենալով ուժեղացնել Հայաստանի մրցունակ մարդկային ներուժի ձևավորումը:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն 3 տարվա համար կազմելու է 2478111840 (երկու միլիարդ չորս հարյուր յոթանասուներե միլիոն մեկ հարյուր տասներեկ հազար ութ հարյուր քառասուն) դրամ:

7.	Բարեգործություն ստացողը	Ծրագրի շահառուներն են՝ 12-ից 18 տարեկան երիտասարդ հայերը, որոնք ուղղակիորեն կօգտվեն ծրագրի երիտասարդական կենտրոնի բաղադրիչից: Ծրագիրը բաց կլինի նման բոլոր շահառուների համար, որոնք ինքնուրույն կամ ծնողների միջոցով հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող կրթական գործունեությանը: Ծրագիրը հասանելի կլինի բոլոր երիտասարդներին, որոնք ի վիճակի կլինեն ձեռք բերել ծրագրի հարմարություններից օգտվելու իրավունքը բաց անդամագրության շնորհիվ: Ծրագիրը հերթափոխության միջոցով տարվա ընթացքում կարող է հյուրընկալել հազարավոր երիտասարդներ, այն կգործի գրեթե արտադասարանային ակումբների ոճով սակայն յուրօրինակ կրթական նպատակներով: Վատագույն դեպքում, երբ ծրագրի կարողությունները կլինեն գերբեռնված, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոնը գտնվում է իր զարգացման վերջնական փուլում և կգործի 2010թ-ի դեկտեմբերի կեսերից մինչև 2013 թ-ի վերջը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագիրը ապահովելու է այնպիսի միջավայր, որտեղ երիտասարդ հայերը ստեղծագործական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով հասանելի են լինելու գլոբալ ինֆորմացիոն հասարակության վերջին ձեռքբերումներին, ի գործում են լինելու ձեռք բերել բարձրարժեք հմտություններ ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում և զարգացնել որակներ, որոնք անհրաժեշտ են, որպեսզի հայկական աշխատուժը մրցունակություն ապահովի գլոբալ գիտելիքների տնտեսությունում: Երիտասարդական կենտրոնը, որը գործում է բացառապես ոչ առևտրային հիմունքներով, իր գործունեությունն է ծավալելու նորակառույց շինության 5 707 քմ տարածքում, որը հագեցած է հարյուրավոր համակարգչային աշխատավայրերով, դասարաններով, աշխատասենյակներով և տեսա և ձայնային աուդիոտրիաներով: Այս հարմարությունները, անվճար հասանելի են լինելու բոլոր երիտասարդ հայերին, որոնք հետաքրքրություն կցուցաբերեն Ստեղծագործական


	տեխնոլոգիաների նկատմամբ, մասնավորապես այնպիսի զարգացող զլորալ ինդուստրիաների նկատմամբ ինչպիսիք են համակարգչային անիմացիան, համակարգչային խաղերի մշակումը, թվային տեսա և ձայնային արտադրությունը և կայքային ծրագրերի մշակումը: Երիտասարդական կենտրոնում աշխատելու է արհեստավարժ կրթական և ադմինիստրատիվ անձնակազմ, որը առանձնահատուկ մշակված համակարգչային ծրագրի, ուսումնական ձեռնարկների և ծրագրերի միջոցով հետևողականորեն օգնելու է փոխանցել “Know-how”-ն (իմանալ-ինչպես) կենտրոնից օգտվողներին: Ծրագրի ժամանակացույցը ներառում է երեք հիմնական փուլեր. Փուլ 1. Ծրագրի զարգացման փուլում միջոցառումները կներառի ծրագրի կառավարում, ծրագրի նախագծում, զարգացում, համագործակցության ցանցի ապահովում, համակարգչային զարգացում և ռեսուրսների համախմբում: Այս փուլը, որը սպասվում է ավարտին հասցնել մինչև 2011 թվականի վերջը, նպատակ ունի վերջնականորեն ապահովել ծրագրի անհրաժեշտ հարմարությունները ծրագրի շահառուներին ընդունելու համար: 1-ին փուլի բյուջեն կազմում է 1 071 528 495 (մեկ միլիարդ յոթանասունմեկ միլիոն հինգ հարյուր քսանութ հազար չորս հարյուր ինսունհինգ) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից. 1) Կահավորանք (սեղաններ, աթոռներ, գրադարակներ, փափուկ կահույք և այլն) – 169 115 400 (մեկ հարյուր վաթսուհինը միլիոն մեկ հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ: 2) Համակարգչային տեխնիկա (Համակարգիչներ, մոնիտորներ, սերվերներ, ցանցային սարքեր, տպիչներ, սկաներներ և այլն) - 244 870 395 (երկու հարյուր քառասունչորս միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար երեք հարյուր ինսունհինգ) ՀՀ դրամ: 3) Համակարգչային ծրագրեր – 112 471 020 (մեկ հարյուր տասներկու միլիոն չորս հարյուր յոթանասունմեկ հազար քսան) ՀՀ դրամ: 4) Կրթական ձեռնարկներ, դասագրքեր, ծրագրեր և այլն- 7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: 5) Կոմունալ ծառայությունների վճար – 125 365 680 (մեկ հարյուր
--	--

	քսանհինգ միլիոն երեք հարյուր վաթսուհինգ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ: 6) Գույքի և սարքավորումների պահմապնման ծախսեր – 18 000 000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ: 7) Տնտեսական և գրեմական ապրանքներ – 4 320 000 (չորս միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: 8) Ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ - 312 940 952 (երեք հարյուր տասներկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար ինը հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ: 9) Գործատուների կողմից սոցիալական վճարների գծով հատկացումներ - 16 459 048 (տասնվեց միլիոն չորս հարյուր հիսունինը հազար քառասունութ) ՀՀ դրամ: 10) Ծախսերի սպասարկման համար անհրաժեշտ այլ ուղղակի ծախսեր – 60 786 000 (վաթսու միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ: Փուլ 2. Սկզբնական գործարկման և փորձարկման փուլի ժամանակ ծրագիրը գործելու է պիլոտային հիմունքներով՝ անձնակազմի վարձում, ծրագրերի և սարքավորումների փորձարկում և ուսումնական պլանի կատարելագործում և չի գործելու իր ամբողջ կարողությունների շրջանակում: Սկզբնական գործարկման և փորձարկման փուլը նպատակադրված է ավարտել մինչև 2012 թվականի վերջը: 2-րդ փուլի բյուջեն կազմում է 545 071 680 (հինգ հարյուր քառասունհինգ միլիոն յոթանասունմեկ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից. 1) Կրթական ձեռնարկներ, դասագրքեր, ծրագրեր և այլն- 7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: 2) Կոմունալ ծառայությունների վճար – 125 365 680 (մեկ հարյուր քսանհինգ միլիոն երեք հարյուր վաթսուհինգ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ: 3) Գույքի և սարքավորումների պահմապնման ծախսեր – 18 000 000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ:
---	--

		4) Տնտեսական և գրենական ապրանքներ – 4 320 000 (չորս միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: 5) Ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ - 312 940 952 (երեք հարյուր տասներկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար ինը հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ: 6) Գործատուների կողմից սոցիալական վճարների գծով հատկացումներ - 16 459 048 (տասնվեց միլիոն չորս հարյուր հիսունհինգ հազար քառասունութ) ՀՀ դրամ: 7) Շահառուների սպասարկման համար անհրաժեշտ այլ ուղղակի ծախսեր – 60 786 000 (վաթսուն միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ: Փուլ 3. Գործունեության փուլի ընթացքում, որը նպատակադրված է սկսել 2012 թվականի վերջերին և ավարտել 2013թ-ի վերջերին, ծրագիրը կլինի ամբողջովին ֆունկցիոնալ և կառաջարկի վերոնշյալ ծառայությունները առավելագույն թվով շահառուների: 3-րդ փուլի բյուջեն կազմում է տարեկան 545 071 680 (հինգ հարյուր քառասունհինգ միլիոն յոթանասունմեկ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից. 1) Կրթական ձեռնարկներ, դասագրքեր, ծրագրեր և այլն- 7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: 2) Կոմունալ ծառայությունների վճար – 125 365 680 (մեկ հարյուր քսանհինգ միլիոն երեք հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ: 3) Գույքի և սարքավորումների պահմապահման ծախսեր – 18 000 000 (տասնութ միլիոն) ՀՀ դրամ: 4) Տնտեսական և գրենական ապրանքներ – 4 320 000 (չորս միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: 5) Ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ - 312 940 952 (երեք հարյուր տասներկու միլիոն ինը հարյուր քառասուն հազար ինը հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ:
--	--	---


		6) Գործատուների կողմից սոցիալական վճարների գծով հատկացումներ - 16 459 048 (տասնվեց միլիոն չորս հարյուր հիսունհինգ հազար քառասունութ) ՀՀ դրամ: 7) Շահառուների սպասարկման համար անհրաժեշտ այլ ուղղակի ծախսեր – 60 786 000 (վաթսուն միլիոն յոթ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Շահառուներին մատուցվելիք ծառայությունների համար անհրաժեշտ 1) Կահավորանք (սեղաններ, աթոռներ, գրադարակներ, փափուկ կահույք և այլն) – 169 115 400 (մեկ հարյուր վաթսունհինգ միլիոն մեկ հարյուր տասնհինգ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ: Նախատեսվում է ներմուծել արտերկրից՝ հիմնականում 2010 և 2012 թթ-ի ընթացքում: 2) Համակարգչային տեխնիկա (Համակարգիչներ, մոնիտորներ, սերվերներ, ցանցային սարքեր, տպիչներ, սկաներներ և այլն) - 235 870 395 (երկու հարյուր երեսունհինգ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար երեք հարյուր ինսունհինգ) ՀՀ դրամ: Նախատեսվում է ներմուծել արտերկրից՝ հիմնականում 2010, 2011 և 2012 թթ-ի ընթացքում: 3) Համակարգչային տեխնիկա (Համակարգիչներ, մոնիտորներ, սերվերներ, ցանցային սարքեր, տպիչներ, սկաներներ և այլն) – 9 000 000 (Ինը միլիոն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ շուկայից՝ հիմնականում 2010 և 2012 թթ-ի ընթացքում: 4) Համակարգչային ծրագրեր – 91 951 020 (ինսունմեկ միլիոն ինը հարյուր հիսունմեկ հազար քսան) ՀՀ դրամ: Նախատեսվում է ներմուծել արտերկրից՝ հիմնականում 2010 և 2012 թթ-ի ընթացքում: 5) Համակարգչային ծրագրեր – 20 520 000 (Քսան միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ շուկայից՝ հիմնականում 2010 և 2012 թթ-ի ընթացքում: 6) Կրթական ձեռնարկներ, դասագրքեր, ծրագրեր և այլն- 6 000 000 (վեց միլիոն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ շուկայից՝ 2010-2013թթ-ի ընթացքում: 7) Կրթական ձեռնարկներ, դասագրքեր, ծրագրեր և այլն- 15 600 000 (տասնհինգ միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ: Նախատեսվում է

	ձեռք բերել և արտերկրից՝ 2010-2013թթ-ի ընթացքում: 8) Կոմունալ ծառայությունների վճար – 376 097 040 (երեք հարյուր յոթանասունվեց միլիոն իննսուց հազար քառասուն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել՝ ՀՀ շուկայից 2010-2013թթ-ի ընթացքում: 9) Գույքի և սարքավորումների պահմապնման ծախսեր – 30 060 000 (երեսուն միլիոն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից՝ 2010-2013թթ-ի ընթացքում: 10) Գույքի և սարքավորումների պահմապնման ծախսեր – 24 000 000 (քսանչորս միլիոն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ շուկայից՝ 2010-2013թթ-ի ընթացքում: 11) Տնտեսական և գրեմական ապրանքներ – 12 960 000 (տասներկու միլիոն ինը հարյուր վաթսու հազար) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ շուկայից՝ 2010-2013թթ-ի ընթացքում: 12) Այլ ապրանքներ և ծառայություններ (թերթեր, ամսագրեր, ֆիլմեր, տեսահոլովակներ և այլն) - 70 000 000 (յոթանասուն միլիոն) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել ՀՀ շուկայից՝ 2010-2013թթ-ի ընթացքում: 13) Այլ ապրանքներ և ծառայություններ (թերթեր, ամսագրեր, ֆիլմեր, տեսահոլովակներ և այլն) - 111 926 000 (մեկ հարյուր տասնմեկ միլիոն ինը հարյուր քսանվեց հազար) ՀՀ դրամ: Նախատեսվում է ձեռք բերել արտերկրից՝ 2010-2013թթ-ի ընթացքում:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	316 440 000 (երեք հարյուր տասնվեց միլիոն չորս հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որից 1-ին փուլ – 105 480 000 (մեկ հարյուր հինգ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից. 1) Վարչական աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ – 89 695 238 (ութսունինը միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր երեսունութ) ՀՀ դրամ: 2) Վարչական աշխատողների համար գործատուների կողմից սոցիալական վճարների գծով հատկացումներ - 4 624 762 (չորս միլիոն վեց հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ: 3) Խորհրդատվական և աուդիտորական ծախսեր – 360 000 (երեք հարյուր վաթսու հազար) ՀՀ դրամ:

	հարյուր վաթսու հազար) ՀՀ դրամ: 4) Գործուղման և ներկայացուցչական ծախսեր – 3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ: 5) Այլ ծախսեր – 7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: 2-րդ փուլ – 105 480 000 (մեկ հարյուր հինգ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից. 1) Վարչական աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ – 89 695 238 (ութսունինը միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր երեսունութ) ՀՀ դրամ: 2) Վարչական աշխատողների համար գործատուների կողմից սոցիալական վճարների գծով հատկացումներ - 4 624 762 (չորս միլիոն վեց հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ: 3) Խորհրդատվական և աուդիտորական ծախսեր – 360 000 (երեք հարյուր վաթսու հազար) ՀՀ դրամ: 4) Գործուղման և ներկայացուցչական ծախսեր – 3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ: 5) Այլ ծախսեր – 7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: 3-րդ փուլ – 105 480 000 (մեկ հարյուր հինգ միլիոն չորս հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է հետևյալից. 1) Վարչական աշխատողների աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ – 89 695 238 (ութսունինը միլիոն վեց հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր երեսունութ) ՀՀ դրամ: 2) Վարչական աշխատողների համար գործատուների կողմից սոցիալական վճարների գծով հատկացումներ - 4 624 762 (չորս միլիոն վեց հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր վաթսուներկու) ՀՀ դրամ: 3) Խորհրդատվական և աուդիտորական ծախսեր – 360 000 (երեք հարյուր վաթսու հազար) ՀՀ դրամ: 4) Գործուղման և ներկայացուցչական ծախսեր – 3 600 000 (երեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ: 5) Այլ ծախսեր – 7 200 000 (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:
---	--

G.E.

6/10.14





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2012 թվականի N Մ-303-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի ապրիլի 18-ի N 1.3[101616]-12 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի 31-ի N ԱԱ/3-4/2773-12
եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրակա-նացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Stoneware, Inc.» ամերիկյան կազմակերպությունից 2012 թվականի փետրվարի 10-ի N 10120 ապրանքագրի հիման վրա իրականացվող գործարքը, որով նախատեսվում է համակարգչային ծրագրի հավատարմագրի ձեռքբերում՝ 2399 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2) «Սոֆթլայն ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00098239) 2012 թվականի մարտի 16-ին կնքված՝ N 1603-12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեք տեսակի համակարգչային ծրագրերի ձեռքբերում՝ 34185000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2012 թվականի N Մ-304-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 29-Ի N Մ-130-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի ապրիլի 18-ի N 3/3.8-1/5070-12 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 18-ի N ԱԱ/3-4/3455-12
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմա-
կերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված
պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-
ժողովի 2012 թվականի փետրվարի 29-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգոր-
ծական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Կապեր
եկեղեցու և կառավարության հետ» ծրագրի մասին» N Մ-130-Ա որոշմամբ հաստատված
ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Դելտա-ինտեգրալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08416387) 2012 թվականի ապրիլի 3-ին
կնքված՝ N WVA/CC/CW-12/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է
Գավառի կիրակնօրյա դպրոցում մասնակի վերանորոգման աշխատանքների իրականա-
ցում՝ 2114056 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 ապրիլի 2012 թվականի N Մ-305-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՐԴԱՍԻՐԱ-
ԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N Մ-328 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 18-ի N 3/3.8-1/5077-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 18-ի N ԱԱ/3-4/3458-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության մարդասիրական օգնության կենտրոնական հանձնաժողովի 2001 թվականի հոկտեմբերի 10-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի «Հույսի ավան» ծրագրի մասին» N Մ-328 որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2008 թվականի փետրվարի 8-ի N Մ-056-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2012 թվականի մարտի 30-ին կնքված՝ N 300312 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հույսի ավան թաղամասի սննդամթերքի պահեստի հիմնանորոգման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 23385000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2012 թվականի ապրիլի 2-ին կնքված՝ N 020412 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Հույսի ավան թաղամասի ուսումնական հաստատության հացաթխման դասասենյակի սարքավորումների հողանցման աշխատանքների իրականացում՝ 496000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2012 թվականի N Մ-306-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N Մ-657-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱ-
ՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2012 թվականի ապրիլի 18-ի N 3/3.8-1/5078-12 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 5-ի N 3/3.8-2/4358-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 02/871-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի փետրվարի 13-ի N ՖԲ/ԱՆԼ-5/897-12, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 2012 թվականի փետրվարի 29-ի N ՊՆ/510-Աղ-104, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 13-ի N ԱԱ/3-4/1135-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության 2012 թվականի փետրվարի 20-ի N 35/239 ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի փետրվարի 10-ի N 01/06/415-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է:**

1. Բարեգործական դրակել «Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամի (ՀՀ, Արմավիրի մարզ. գ. Պտղունք, Վարդանանց 1, ՀՎՀՀ՝ 01557357) կողմից իրականացվող՝ 554000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով «Մայրատուն» բարեգործական ծրագիրը (կցվում է):


2. «Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար:

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-

ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզպետներին:



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

«Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայրատուն»
ՕՐԱԳԻՐ

1	Օրագրի նպատակը	Օրագրին ուղղված է հասանելիություն ամենախոցելի խմբերին, որոնց շարքերին են դասվում 1. Բոլոր տեսակի բռնության ենթարկված հղի կանայք և մինչև 3 տարեկան երեխա ունեցող այն մայրերը, ովքեր չունեն ապաստան և պաշտպանության կարիք ունեն ԱՊԱՍՏՈՒՆ. Հիմնադրամը նախաձեռնել է ակտիվ գործունեություն սկսել այս ծրագրով, որը հնարավորություն կտա բռնության ենթարկված, հեղափոխվող և անօթևան հայ մայրերին ապաստան գտնելու մեր հիմնադրամում: Ցուցաբերվելիք սոցիալական ձևերը կթափարկվեն, որպեսզի նրանք կարողանան հիմնովին փոխել իրենց կյանքը, կանգնել հասարակության ուժերի վրա, մասնագիտություն ձեռք բերել, ընդգրկվել փոքր բիզնեսի ծրագրերում և կայունացնել իրենց ընտանեկան հարաբերությունները չտուժահարելով իրենց իսկ իրավունքները: Օրագրի նպատակն է պաշտպան տալ այն կանանց ովքեր դրա կարիքն ունեն: Նրանք են. լքված, բռնության ենթարկված, վտանգված հղիությամբ, ինչպես նաև երեխայից հրաժարվելու շեմին կանգնած կանայք, ովքեր հուսախաբության, լքվածության և բռնության գոհ են դարձել հանգամանքների բերումով: Օրագրի նպատակն է. բարեկեցիկ և ապահով կենսակերպ, կենցաղային հմտություններ, բարոյահոգեբանական առողջ վիճակ, մասնագիտության ձեռք բերում, իրավաբանական պաշտպանվածություն և իրենց իսկ իրավունքների իրազեկում: 2. Միայնակ ծերեր ՊՆԱԿ ՄԸ ԿԵՐԱՎԻՐԻ. ՀՀ Արմավիրի մարզի 5 գյուղերի միայնակ ծերերին շաբաթը երկու անգամ լիարժեք սնունդ (հյուրասիրություն) ՍՈՒՐԲ ԳՐԲԻ ՄԵՐՏՈՂՈՒԹՅՈՒՆ. Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Սիոն Եպիսկոպոս Ադամյանը՝ կարևորելով ծրագրի նպատակները, ամրագրել է Հայ Առաքելական սուրբ եկեղեցու Արմավիրի թեմի Փարաքարի Սբ. Աստվածածին եկեղեցու հոգևոր վանահորը, շաբաթը մեկ անգամ 2 ժամյա Սուրբ Գրքի ուսումնասիրություն անցկացնելու համար: Նպատակն է. Տարածաշրջանի բնակչությանը ծանոթացնել Սուրբ Գրքի, Հայ Առաքելական եկեղեցու ծեսերի և ծիսակարգերի հետ
2	Օրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել ՀՀ օրենքով սահմանված հարկային արտոնություններից և վճարներից, ըստ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի 66Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 3-րդ կետի «Բ» ենթակետի

3	Բարեգործը	ԱՄՆ քաղաքացիներ, Կալիֆոռնիա նահանգի Լոնգ Բիչ քաղաքի բնակիչներ, ամերիկահայ բարեգործներ տեր և տիկին Ղազարյանները և նրանց ընտանիքը Մեթա-Յունիս Ղազարյան Ենովքի (անձնագիր № AG0209541, տրված է 17.12.2003թ. 002-ի կողմից) Ջուրաբ-Բարսեղ Ղազարյան Բարսեղի (անձնագիր № AG0209540, տրված է 17.12.2003թ. 002-ի կողմից)
4	Օրագիրը կատարողը	«Լայթհաուս-Փարոս» բարեգործական հիմնադրամ, ք. Երևան, Չարենցի 58-5, ինչպես նաև ՀՀ Արմավիր մարզ, գյուղ Պտղունք Վարդանանց 1, հեռ. 099-32-78-34, 0 դրամ սակագնով թեժ գիծ՝ 20-80; չվՀՀ 01557357
5	Օրագրի իրականացման վայրը	ՀՀ և ԼՂՀ ողջ տարածք
6	Օրագրի բյուջեն	2012թ. հունվարի 1-ից մինչև 2016թ. դեկտեմբերի 31-ը նախատեսվող բարեգործական ծրագիրը իրականացնելու համար ծրագրի բյուջեն կազմել է՝ 2012թ. – \$181 000 տարեկան /հարյուր ութսունմեկ հազար ԱՄՆ դոլար/ 2013թ. – \$182 000 տարեկան /հարյուր ութսուներկու հազար ԱՄՆ դոլար/ 2014թ. – \$174 000 տարեկան /հարյուր յոթանասունչորս հազար ԱՄՆ դոլար/ 2015թ. – \$176 000 տարեկան /հարյուր յոթանասունվեց հազար ԱՄՆ դոլար/ 2016թ. – \$178 000 տարեկան /հարյուր յոթանասունուր հազար ԱՄՆ դոլար/ Ընդամենը՝ \$891 000 /ութ հարյուր ինսունմեկ հազար ԱՄՆ դոլար/ Ֆինանսական աղբյուրները՝ «Փարոս Ֆաունդեյշն» 6 ամիսը մեկ
7	Բարեգործություն ստացողը	Հասարակության ամենախոցելի խմբերը, սոցիալապես ծայրաստիճան անապահով խավը՝ ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարության տվյալների. - բռնության ենթարկված, հղի և մինչև 3 տարեկան երեխա ունեցող անօթևան, լքված կանայք /միաժամանակ 25 կին՝ իրենց երեխաների հետ/ - միայնակ ծերեր /30 հոգի/, - ԲՀԿ-ների հետ համատեղ գործունեությամբ, նրանց կողմից ներկայացված, բռնության ենթարկված, սոցիալապես ծայրաստիճան անապահով կանայք և մինչև 3 տարեկան երեխա ունեցող մայրեր, (Նշված ԲՀԿ-ներից են Կանանց Ռեսուրսային Կենտրոնը, Կանանց Իրավունքների Կենտրոնը, Զանգակատունը, և այլ բոլոր ԲՀԿ-ները, որոնք զբաղվում են բռնության ենթարկված կանանց և երեխաների հարցերով) - փախստական ընտանիքներ /30 հոգի/, - հաշմանդամներ /5-10 հոգի/, - հիմնադրամի շահառու ընտանիքներ (բազմազավակ, բնական աղետներից տուժված և կացարան չունեցող) /60 ընտանիք/
3	Օրագրի իրականացման տևողությունը	2012թ. հունվար 1 – 2016թ. դեկտեմբեր 31

9 Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Արմավիրի մարզ գյուղ Պտղունք Վարդանանց 1 հասցեում գործում է «Մայրատուն» ծրագիրը: 1. Ապաստարան. 25 բռնության ենթարկված հոիներ և կանայք իրենց երեխաներով կարող են ապաստան գտնել Մայրատանը, որտեղ նրանք ստանում են՝ ա/մոր և երեխայի համար նախատեսված առանձին սենյակներ՝ ապահովված անհրաժեշտ կահույքով, սանհանգույցով և լողասենյակներով, ք/4անգամյա սնունդ, գ/հագուստ, դ/հիգիենայի պարագաներ և այլ ամենը ինչ անհրաժեշտ է մորն ու մանկանը Օրագրի շրջանակներում ներգրավված են հոգեբանի, գինեկոլոգ-մանկաբարձի և ատամնաբույժի ծառայություններ (կարիներ, որոնք հազեցված են բժշկական համապատասխան սարքավորումներով, որոնց կարիքն ունեն ապաստանի շահառուները: Օրագիրն ունի ուսումնադաստիարակչական նպատակ, որի իրականացման համար ծառայում են հիմնադրամի համակարգչային սենյակը, խաղասենյակը, կարի սենյակը, «Հարսի սենյակը» (տարածքների պատրաստում, հարսանյաց տոնին նվիրված դիզայներական աշխատանքներ), հատուկ ֆիլմերի ցուցադրման համար նախատեսված սենյակը, խոհանոցն ու ճաշարանը: Հիմնադրամի կանոնակարգին ամբողջապես ենթարկվելու դեպքում հիմնադրամը հնարավորություն է տալիս կենսվոր շահառուներին մինչև 2 տարի ժամկետով բնակություն հաստատել ապաստանում: 2012թ. հունվարի 1-ից 2016թ. դեկտեմբերի 31-ը շահառուների ծախսերը յուրաքանչյուր շահառուի համար տարեկան կազմում է \$4500 /չորս հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/: Օրագրի այս կետն իրականացնելու համար անհրաժեշտ ընդհանուր գումարը կազմում է \$112500 /հարյուր տասներկու հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/ տարեկան: 2. «Պնակ մը կերակուր». Օրագրի շրջանակներում 30 միայնակ անապահով ծերեր 22 Արմավիրի մարզի 5 գյուղերից (Պտղունք, Մուսալեռ, Արևաշատ, Փարաբար, քաղաք Էջմիածին) շաբաթական 2 օր հիմնադրամի մասնաշենք ճաշի են հրավիրվում (2 ճաշատեսակ + քաղցրավենիք): Նրանց տեղափոխումը իրականացվում է հիմնադրամի մեքենայով: Օրագրի այս կետն իրականացնելու համար անհրաժեշտ ընդհանուր գումարը կազմում է \$22000 /քսաներկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան: 3. Մուրբ գրքի ուսումնասիրություն. Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Սիոն Եպիսկոպոս Ազամյանը՝ կարևորելով ծրագրի նպատակների իրագործումը, ամրագրել է Հայ Առաքելական սուրբ եկեղեցու Արմավիրի թեմի Փարաբարի Սբ. Աստվածածին եկեղեցու հոգևոր վանահորը, ով ամեն ուրբաթ Մուրբ Գրքի ուսումնասիրություն է անցկացնում մեր կենտրոնում: Մասնակիցների թիվը մոտակա գյուղերից հասնում է մինչև 120-140 հոգի, որոնք էլ պարբերաբար տոնական օրերին ներգրավվում են հիմնադրամի բարեգործական
---	---

10 Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	ծրագրերում: Օրագրի այս կետն իրականացնելու համար անհրաժեշտ է \$3500 /երեք հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/ տարեկան (հյուրասիրություն և տոն օրերին նվիրաբերություն): 2012թ.-ից օգնությունը նախատեսվում է տեղափոխել Արմենիա ֆոնդի միջոցով Հայաստան և ԼՂՀ: Օգնությունը հավաքվում է ԱՄՆ հայ համայնքի աջակցությամբ: 1. Ապաստանի 25 մայրերից յուրաքանչյուրին իրենց երեխաների հետ անհրաժեշտ է տարեկան \$4500 /չորս հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/ - Օրական 3 անգամյա սնունդ /յուրաքանչյուր օրը \$6 չափով/ - տարեկան \$2160 /երկու հազար հարյուր վաթսուս ԱՄՆ դոլար/, - Օրագրի այս կետն իրականացնելու համար նախատեսվում է ներմուծել հետևյալ ապրանքները. Հագուստ, կոշիկ, հիգիենայի պարագաներ (օձառ, ատամի մածուկ, ատամի խոզանակ, երեխայի տակդիրներ, կանացի տակդիրներ, հեգինիկ, անձեռոցիկներ, մարմնի և մազերի խնամքի պարագաներ, սրբիչներ, անկողնային պարագաներ, սպասք և այլն), գինեկոլոգիայի և ատամնաբույժի կարիներ, անհրաժեշտ սարքավորումներ, դեղորայք - տարեկան \$2340 /երկու հազար երեք հարյուր քառասուն ԱՄՆ դոլար/ - Նախատեսվում է ներմուծել ավտոմեքենա (գրասենյակային աշխատանքները կազմակերպելու, ինչպես նաև բռնության ենթարկված կանանց ապաստան տեղափոխելու, այնուհետև բժշկի կամ այլ հարցերով նրանց այլ վայր տեղափոխելու, ծննդաբերելու անհապաղ հիվանդանոց տեղափոխելու համար): 2. Պնակ մը կերակուր. 22 Արմավիրի մարզի 5 գյուղերից (Պտղունք, Մուսալեռ, Արևաշատ, Փարաբար, քաղաք Էջմիածին) 30 միայնակ անապահով ծերերին շաբաթական 2 օր բարեգործական ճաշի հյուրասիրության համար անհրաժեշտ է \$250 /երկու հազար հիսուն ԱՄՆ դոլար/ (որից \$50-ը նախատեսվում է ծերերին հիմնադրամ, այնուհետև հիմնադրամից տուն տեղափոխելու համար): Նախատեսվում է ներմուծել մեծահասակների հագուստ, սննդամթերք (չոր) և խոհանոցային պարագաներ (սրբիչներ, անձեռոցիկներ, սպասք) - \$10000 /տաս հազար ԱՄՆ դոլար/, ինչպես նաև մեծ ավտոմեքենա (ծրագրի մասնակիցներին հիմնադրամ և հիմնադրամից տուն տեղափոխելու համար): Տարեկան՝ \$22000 /քսաներկու հազար ԱՄՆ դոլար/: 3. Մուրբ Գրքի ուսումնասիրության համար շաբաթական 1 անգամ հյուրասիրություն և նվերների հանձնում է կազմակերպվում: Եկեղեցական տոներն ու ծիսակատարություններն անցկացնելու և համայնքի բնակչությանը ներգրավելու համար հյուրասիրության և նվերների համար նախատեսվում է՝ Նախատեսվում է ներմուծել հագուստ, կոշիկ: Տարեկան \$3500 /երեք հազար հինգ հարյուր ԱՄՆ դոլար/:
11 Օրագրի իրականացման հետ կապված	Կազմակերպության ծախսերը (գրասենյակային վարձ, գրասենյակային գույքի ձեռքբերում, համակարգիչներ, հեռախոսներ, ավտոմեքենաների ծախսեր, ավտոմեքենա, գրասենյակի աշխատողների աշխատավարձ, կոմունալ

կազմակերպչական ծախսերը	վճարներ): 2012թ. – \$43 000 /քառասուններեք հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակային վարձ – \$1000 /մեկ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակային գույքի ձեռքբերում, գինեկոլոգիայի և ատամնաբուժի կաբինետների համար սարքավորումներ – \$10000 /տաս հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Հեռախոսներ – \$1000 /մեկ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Ավտոմեքենայի ներմուծում – \$15000 /տասնհինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – ավտոմեքենայի ծախսեր, – \$2000 /երկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակի աշխատողների աշխատավարձ – \$10000 /տաս հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Կոմունալ վճարներ – \$4000 /չորս հազար ԱՄՆ դոլար/ տարեկան 2013թ. – \$44 000 /քառասունչորս հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակային վարձ – \$2000 /երկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակային գույքի ձեռքբերում – \$3000 /երեք հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Հեռախոսներ – \$1000 /մեկ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Ավտոմեքենայի ներմուծում – \$20000 /քսան հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Ավտոմեքենաների ծախսեր, – \$2000 /երկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակի աշխատողների աշխատավարձ – \$12000 /տասներկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Կոմունալ վճարներ – \$4000 /չորս հազար ԱՄՆ դոլար/ տարեկան 2014թ. – \$36 000 /երեսունվեց հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակային վարձ – \$2000 /երկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակային գույքի ձեռքբերում, գինեկոլոգիայի և ատամնաբուժի կաբինետների համար անհրաժեշտ սարքավորումներ – \$15000 /տասնհինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Հեռախոսներ – \$1000 /մեկ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Ավտոմեքենաների ծախսեր – \$2000 /երկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակի աշխատողների աշխատավարձ – \$12000 /տասներկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Կոմունալ վճարներ – \$4000 /չորս հազար ԱՄՆ դոլար/ տարեկան 2015թ. – \$38 000 /երեսունութ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակային վարձ – \$2000 /երկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակային գույքի ձեռքբերում, գինեկոլոգիայի և ատամնաբուժի կաբինետների համար անհրաժեշտ սարքավորումներ – \$15000 /տասնհինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Հեռախոսներ – \$1000 /մեկ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Ավտոմեքենաների ծախսեր – \$2000 /երկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակի աշխատողների աշխատավարձ – \$13000 /տասներեք հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Կոմունալ վճարներ – \$5000 /հինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան 2016թ. – \$40 000 /քառասուն հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակային վարձ – \$2000 /երկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակային գույքի ձեռքբերում, գինեկոլոգիայի և ատամնաբուժի կաբինետների համար անհրաժեշտ
------------------------	--

	սարքավորումներ – \$14000 /տասնչորս հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Համակարգիչ, հեռախոսներ – \$3000 /երեք հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Ավտոմեքենաների ծախսեր – \$2000 /երկու հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Գրասենյակի աշխատողների աշխատավարձ – \$14000 /տասնչորս հազար ԱՄՆ դոլար/ տարեկան – Կոմունալ վճարներ – \$5000 /հինգ հազար ԱՄՆ դոլար/ տարեկան
12 Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարություն ՀՀ ոստիկանություն ՀՀ պաշտպանության նախարարություն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և քույր եկեղեցիները ՄԱԿ-ի Հայաստանյան գրասենյակը, Եվրոպական կառույցները, միջազգային և տեղական հասարակական, բարեգործական կազմակերպությունները, հիմնադրամները, համայնքները և թաղապետարանները, մարզպետարանները ՀԿ-ներ, ովքեր առնչվում են ընտանեկան բռնության և ընտանեկան համակարգի հետ Սփյուռքահայեր, անհատ բարեգործներ
13 Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հոգեբարձուների խորհուրդը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերով նախարարություն Առողջապահության նախարարություն Պաշտպանության նախարարություն ՀՀ Ոստիկանության Սահմանված կարգով հաշվետվություն ներկայացնել ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով

Ծրագրի ղեկավար Ն. Մուրադյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**13 ապրիլի 2012 թվականի N Մ- 331 -Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1063-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Այբ» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 5-ի N 3/3.8-1/4360-12 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 6-ի N ԱԱ/3-4/2975-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» ավագ դպրոց» N Մ-1063-Ա (2011 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1089-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ֆորտես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02223284) 2011 թվականի դեկտեմբերի 15-ին կնքված՝ N ԱԲ/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համապատասխան տարայով և փաթեթավորված ապրանքի (բազմամուտքային թվային վահանակ LS 9/32) մատակարարման հետ կապված միջնորդական ծառայությունների մատուցում՝ 685.620 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.


2) «ԷՄ ՍԻ ԷՖ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01542747) 2012 թվականի մարտի 1-ին կնքված՝ N ԱԲ/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է համապատասխան տարայով

և փաթեթավորված ապրանքի (Կլավինովա CVP-409GP) մատակարարման հետ կապված միջնորդական ծառայությունների մատուցում՝ 614.250 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Շինսերտիֆիկատ» ՍՊԸ-ի հետ 2012 թվականի մարտի 7-ին կնքված՝ N 003-22 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական որակի տեխնիկական հսկողություն՝ 750.000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Ջուլիանա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04700102) 2012 թվականի մարտի 24-ին կնքված՝ N 09/2012 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝ N 1 Հավելվածում նշված ապրանքների հանձնում գնորդին՝ 1.462.500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
27 ապրիլի 2012 թվականի N Մ-322
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց
սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2012 թվականի ապրիլի 18-ի N 3/3.8-2/5051-12, Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի ապրիլի 20-ի
N ՀՔ/22/3477-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 16-ի N ԱԱ/3-6/3284-12 եզրակացություն-
ները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության կողմից
ողարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության հայաստանյան
մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված թեղը (7 տեղ, 98 կգ ընդհանուր քաշով,
8819.07 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 890.32 եվրո, ցանկը կցվում է,
«Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բա-
րեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի
«Ֆրանսիայի «Բժիշկներ» առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի
կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման
ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին»
N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հա-
յաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ


Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

6/10.13

Մտազուր ընթի զամն

համաձայն N 97987, 97763, 98010, 99608 հոդվածների

№	Անվանում	Քանակ	Գին/Եվրո
1	Կանամիցինի սուլֆատ, 250մգ/մլ հիմքով, 4մլ, ամպուլա	940	2342.48
2	Կապրեոմիցինի սուլֆատ, 1գ հիմքով, փոշի, սրվակ	980	4900.00
3	Ախտահանիչ նրուջ, bidon 5l	4	145.75
4	Ստերիլիմ ալկոհոլային ձեռքի մաքրող միջոց, լուծույթ, 500մլ, շիշ	4	24.72
5	Սալբուտամոլ, 200 շունչ, 0.1մգ/շունչ, ինհալյատոր	6	9.24
6	QTF (SF Գոլդ) ELISA կոմպլեկտ 192 հայտնաբերումների համար	2	1361.88
7	Զերմամեկուսիչ արկղ	1	35.00
Ընդամենը			8819.07





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2012 թվականի N Մ- **333**-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1125-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Օրրան» բարեգործական
հասարակական կազմակերպություն)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 3/3.8-1/5434-12 ու Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012
թվականի ապրիլի 26-ի N ԱԱ/3-4/3766-12 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության
կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հան-
րապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողո-
վի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին»
ծրագրի մասին՝ N Մ-1125-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա
համար ունի զգալի նշանակություն՝

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2012 թվականի հունվարի 9-ին
կնքված՝ N Ե-234 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի
ապրիլի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում «Օրրան» բարեգործա-
կան հասարակական կազմակերպության կենտրոնի գազասպառման համակարգի տեխնի-
կական սպասարկման և կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 69718 դրամի
չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ապրիլի 2012 թվականի N Մ - 334 - Ա
քաղ. երևան

«ԱՔՄԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՌՈՂՋ ԵՎ ԱՊԱՀՈՎ ԿՅԱՆՔ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 3/3.8-1/5435-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի ապրիլի 26-ի N 02/2537-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի ապրիլի 28-ի N ՀՀԲ/22/3610-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի ապրիլի 23-ի N ԱԱ/3-4/3661-12, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի ապրիլի 25-ի N 101/104.3/2320-12, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2012 թվականի ապրիլի 25-ի N 01/14.1/1702-12 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 24-ի N 1767-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «ԱՔՄԱ» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ 55000000 դրամ ընդհանուր արժողությամբ «Առողջ և ապահով կյանք» բարեգործական ծրագիրը» (կցվում է):

2. Առաջարկել «ԱՔՄԱ» բարեգործական հասարակական կազմակերպությանը նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու, Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Շիրակի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Գործադիր տնօրեն

 Բ. Աղիսանյան

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

“Առողջ և ապահով կյանք” բարեգործական ծրագիր


1. Ծրագրի նպատակը	ա) ՀՀ և ԼՂՀ բնակվող կարիքավոր անձանց բարեգործական անվճար բուժօգնության իրականացում բ) ՀՀ բնակիչների կրթում՝ դասավանդելով հակաճգնաժամային տեսական և գործնական հմտություններ
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակները	Օգտվել ՀՀ գործող օրենքի սահմաններում հարկային և մաքսային արտոնություններից:
3. Բարեգործը	Գերմանիայի “Նեյնկիրշենի Էվանջելիք – ռեֆորմային Եկեղեցի, օգնություն Ռումինիային աշխատանքային խումբ” բարեգործական կազմակերպությունը (<i>Նոյշտրասե 54, D-57290 Նեյնկիրշեն</i>), ի դեմս կազմակերպության գործադիր տնօրեն Հարթմուտ Վելլերի (անձնագիր N 2044085009D) և անհատ բարերարներ: Մեծ Բրիտանիայի “Յորքշիր բարեգործական օգնություն արևելյան Եվրոպային” Մեծ Բրիտանիայի Հայաստանին հումանիտար առաքելության անդամներ (Ջոն Շաքլետոն – անձնագիր N 040108644, հասցե՝ <i>8 Lիդհոլ Վյու, Հարոգեյթ, Հյուսիսային Յորքշիր, Անգլիա, HG2 9PF</i>) ՓՐԱՅՄ – “Միջազգային Բժշկական կրթության մեջ համագործակցություն” բարեգործական կազմակերպություն, Մեծ Բրիտանիա
4. Ծրագիրը կատարողը	«ԱՔՄԱ» բարեգործական հասարակական կազմակերպություն: Երևան, Արեւյան 17/20, ՀՎՀՀ՝ 01240687: Կանոնադրությունը հաստատված 31 մայիսի, 2007թ. N 03 Ա 076188՝ հաստատված արդարադատության նախարարության կողմից:
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ՝ Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու մարզեր, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն Ծրագրի շրջանակներում օգնության և համատեղ աշխատանքների անցկացում՝ համագործակցելով Առողջապահության և Արտակարգ Իրավիճակների նախարարությունների հետ: Բնագավառը՝ սոցիալ-առողջապահական և կրթական հակաճգնաժամային
6. Ծրագրի բյուջեն	1/05/2012թ. – 30/04/2017թ. – նախատեսված է մոտ 55 մլն ՀՀ դրամ
7. Բարեգործություն ստացողը	Շահառուներն են. Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերում և ԼՂՀ բնակվող սոցիալապես անապահով քաղաքացիները, հաշմանդամները, թոշակառուները, միայնակ ծերերը, ծնողազուրկ երեխաները և բոլոր նրանք, ովքեր կամավոր կղիմեն ԱՔՄԱ ԲՀԿ-ին բժշկական օգնություն ստանալու նպատակով:

	Մարզերի ընտրությունը կատարվել է, ելնելով ՀՍՄՕ5 Տեղեկատվական վերլուծական պարբերականի “Մարդկային Աղքատությունը ՀՀ մարզերում” տվյալների, համաձայն որի Անմատչելիության (կյութական, ֆիզիկական, ժամանակի անբավարարություն) պատճառով բժշկի չդիմաձևների թիվը (% մարզի բնակչության համապատասխան թվում) հիվանդացած ու բժշկի կարիք ունեցածների թվում կազմել է Շիրակ 43,2%, Լոռի 42,6%, Տավուշ 46,5%, Գեղարքունիք 37,7%, Արագածոտն 44,4%: Նյութական անմատչելիությունը բժշկին դիմելու ծախսերը հոգալու անկարողությունը գյուղական բնակչությունում կազմել է Շիրակ 93,1%, Լոռի 94,9%, Տավուշ 94,4%, Գեղարքունիք 92,1%, Արագածոտն 96,3%: Միաժամանակ կիրականացվի նաև բնական աղետների ժամանակ մինչբժշկական օգնության ցուցաբերման (հակաճգնաժամային) ուսուցում, որին կարող են մասնակցել 10 տարեկանից բարձր ցանկացած բնակիչ: Այս դասընթացները կազմակերպվում են ԱՔՄԱ-ի հետ համագործակցող Մեծ Բրիտանիայի ՓԲՄՅՄ բարեգործական կազմակերպության բժշկական թիմի դասախոսների կողմից:
8. Ծրագրի իրականացման տևողությունը	մայիս 2012 թվական-մայիս 2017 թվական:
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Նախատեսվում է այցելություններ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերի և ԼՂՀ գյուղեր, որտեղ կցուցաբերվի բարեգործական անվճար բուժօգնություն տեղաբնակ կարիքավոր անձանց, անհրաժեշտության դեպքում նաև հիվանդների տեղափոխում: Ծրագրում ենք այցելել վերոնշյալ մարզերի բոլոր գյուղերը, որտեղ միջինը 3-4 օրերի ընթացքում կիրականացվի անվճար բազմապրոֆիլ բժշկական կոնսուլտացիա, անվճար հետազոտություններ, անվճար ատամնաբուժական օգնություն: Բուժանձնակազմը կփոփոխվի՝ կախված վայրից և կարիքից: Առաջին մինչբժշկական օգնության ցուցաբերման ուսուցում սեմինարների և գործնական պարապմունքների տեսքով, դասախոսների հրավիրում, մասնագետների ընդգրկում, տպագրվող նյութերի, գրքույկների ներկայացում: Նախատեսում ենք առաջին տարում այցելել Արագածոտնի մարզի գյուղերը, 2րդ տարում՝ Շիրակ և Լոռի, 3րդ տարում՝ Տավուշ, 4րդ տարում Գեղարքունիք, 5րդ տարում՝ ԼՂՀ: Հնարավոր են կարիքի դեպքում կրկնակի այցելություններ: Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը՝ <u>2012-2013թթ. – 14 մլն ՀՀ դրամ</u> ա/ մոբիլ կլինիկայի ձեռքբերում՝ 4.500.000 դրամ բ/ տրանսպորտային ծախսեր՝ 1.000.000 դրամ գ/ մոբիլ կլինիկայի ներմուծման և օգտագործման հետ կապված ծախսեր (ընթացիկ նորոգում, վերանորոգում և այլն)՝ 600.000 դրամ դ/ մոբիլ կլինիկայի պահպանության, կայանման ծախսեր՝ 400.000 դրամ ե/ բուժաարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, կահույք, ծախսվող ատամնաբուժական պարագաներ, դեղորայք՝ 5.500.000 դրամ զ/ բնական աղետների դեպքում առաջին մինչբժշկական օգնության դասընթացների և գործնական պարապմունքների վարում – 500.000 դրամ

Ե/ դիդակտիկ նյութերի ցուցադրում, բուկլետների տպագրում բնակիչներին բացառապես անվճար տրամադրման համար – 600.000 դրամ
ը/ դասախոսական, բժշկական անձնակազմի կեցություն – 900.000 դրամ,
2013-2014 թթ – 7 մլն ՀՀ դրամ
ա/ տրանսպորտային ծախսեր՝ 1.000.000 դրամ
բ/ մոբիլ կլինիկայի օգտագործման հետ կապված ծախսեր (ընթացիկ նորոգում, վերանորոգում և այլն)՝ 600.000 դրամ
գ/ մոբիլ կլինիկայի պահպանության, կայանման ծախսեր՝ 400.000 դրամ
դ/ բուժսարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, ծախսվող ատամնաբուժական պարագաներ, դեղորայք՝ 3.000.000 դրամ
ե/ բնական աղետների դեպքում առաջին մինչբժշկական օգնության դասընթացների և գործնական պարապմունքների վարում – 500.000 դրամ
զ/ դիդակտիկ նյութերի ցուցադրում, բուկլետների տպագրում բնակիչներին բացառապես անվճար տրամադրման համար – 600.000 դրամ
է/ դասախոսական, բժշկական անձնակազմի կեցություն – 900.000 դրամ,
2014-2015 թթ – 8 մլն ՀՀ դրամ
ա/ տրանսպորտային ծախսեր՝ 1.000.000 դրամ
բ/ մոբիլ կլինիկայի օգտագործման հետ կապված ծախսեր (ընթացիկ նորոգում, վերանորոգում և այլն)՝ 900.000 դրամ
գ/ մոբիլ կլինիկայի պահպանության, կայանման ծախսեր՝ 400.000 դրամ
դ/ բուժսարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, ծախսվող ատամնաբուժական պարագաներ, դեղորայք՝ 3.700.000 դրամ
ե/ բնական աղետների դեպքում առաջին մինչբժշկական օգնության դասընթացների և գործնական պարապմունքների վարում – 500.000 դրամ
զ/ դիդակտիկ նյութերի ցուցադրում, բուկլետների տպագրում բնակիչներին բացառապես անվճար տրամադրման համար – 600.000 դրամ
է/ դասախոսական, բժշկական անձնակազմի կեցություն – 900.000 դրամ,
2015-2016 թթ – 8 մլն ՀՀ դրամ
ա/ տրանսպորտային ծախսեր՝ 1.000.000 դրամ
բ/ մոբիլ կլինիկայի օգտագործման հետ կապված ծախսեր (ընթացիկ նորոգում, վերանորոգում և այլն)՝ 900.000 դրամ
գ/ մոբիլ կլինիկայի պահպանության, կայանման ծախսեր՝ 400.000 դրամ
դ/ բուժսարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, ծախսվող ատամնաբուժական պարագաներ, դեղորայք՝ 3.700.000 դրամ
ե/ բնական աղետների դեպքում առաջին մինչբժշկական օգնության դասընթացների և գործնական պարապմունքների վարում – 500.000 դրամ

	զ/ դիդակտիկ նյութերի ցուցադրում, բուկլետների տպագրում բնակիչներին բացառապես անվճար տրամադրման համար – 600.000 դրամ է/ դասախոսական, բժշկական անձնակազմի կեցություն – 900.000 դրամ, <u>2016-2017թթ – 12.5 մլն դրամ</u> ա/ տրանսպորտային ծախսեր՝ 2.000.000 դրամ բ/ մոբիլ կլինիկայի օգտագործման հետ կապված ծախսեր (ընթացիկ նորոգում, վերանորոգում և այլն)՝ 1.500.000 դրամ գ/ մոբիլ կլինիկայի պահպանության, կայանման ծախսեր՝ 1.000.000 դրամ դ/ բուժսարքավորումներ, գործիքներ, պահեստամասեր, ծախսվող ատամնաբուժական պարագաներ, դեղորայք՝ 5.400.000 դրամ է/ բնական աղետների դեպքում առաջին մինչբժշկական օգնության դասընթացների և գործնական պարապմունքների վարում – 500.000 դրամ զ/ դիդակտիկ նյութերի ցուցադրում, բուկլետների տպագրում բնակիչներին բացառապես անվճար տրամադրման համար – 600.000 դրամ է/ դասախոսական, բժշկական անձնակազմի կեցություն – 1.500.000 դրամ Մնացորդ 5.5 մլն (10%) ՀՀ դրամը կօգտագործվի կազմակերպչական ծախսերի վրա:
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը	Մոբիլ կլինիկա /1 հատ, 4.500.000 դրամ/ - որտեղ կիրականացվի բժշկական խորհրդատվություն, հետազոտություն, բժշկական օգնության ցուցաբերում Բժշկական սարքավորումների /1 ատամնաբուժական սարք, 1 սոնոգրաֆիայի ապարատ, 1 էխոկարդիոգրաֆիայի սարք և այլն, ինչպես նաև ատամնաբուժական պարագաներ, նյութեր/ ձեռք բերում ՀՀ գյուղական բնակչությանն անվճար գործիքային հետազոտման և բուժման համար – 21.300.000 դրամ Նախորդ ծրագրի շրջանակներում ստացված և կազմակերպությունում հաշվառված և դոնորների կողմից առաջարկված 2 շտապ օգնության մեքենաները շարունակական բարեգործական ծրագրերում կօգտագործվեն հիվանդների անվճար տեղափոխման համար հեռավոր գյուղերից մարզկենտրոնի հիվանդանոց կամ որևէ այլ բժշկական կենտրոն:
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	5.5 մլն ՀՀ դրամ: Գրասենյակային վարձակալություն 1100000 ՀՀ դրամ Կոմունալ ծախսեր 900000 ՀՀ դրամ Աուդիտ – 1000000 ՀՀ դրամ Ավտոմեքենաների ապահովագրության ծախսեր – 500000 ՀՀ դրամ Ճանապարհածախս / տաքսի, վառելիք/ - 500000 ՀՀ դրամ Չնախատեսված ծախսեր /արհեստավոր, էլեկտրիկ, մեխանիկ և այլն/ - 750000 ՀՀ դրամ Մանիտարական վերահսկողության ծախսեր - 500000 ՀՀ դրամ Գույքահարկ, բանկային գործառնությունների ծախսեր - 250000 ՀՀ դրամ

	Վերոնշյալ ծառայությունների ավելացված արժեքի հարկային մուծումները կկատարվեն առանց հարկային արտոնությունների:
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ: ՀՀ և ԼՂՀ արտակարգ իրավիճակների նախարարություն: ՀՀ և ԼՂՀ տարբեր մարզերի մարզպետարանների առողջապահության վարչություններ: Ծրագրի իրականացման ողջ ընթացքում վայրի ընտրությունը և շահառուների ընդգրկումը կհամապատասխանեցվի մարզպետարանների հետ:
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Անկախ աուդիտի արդյունքների քննարկում ԱՔՄԱ ԲՀԿ-ի հոգաբարձուների խորհրդի կողմից, ՀՀ քաղաքական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների և «ԱՔՄԱ» ԲՀԿ-ի հոգաբարձուների խորհրդի միջոցով:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 մայիսի 2012 թվականի N Մ-335-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2012 թվականի մայիսի 7-ի համաձայնեց-
ման թերթը, որոշում է:*

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից, որպես
օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված
դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների (14 տեղ, 6878 կգ ընդհանուր քաշով,
1750819.73 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը
կազմել են 6200 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման
ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդա-
սիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավար-
տելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել
ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 մայիսի 2012 թվականի N Մ-336-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2012 թվականի մայիսի 7-ի համաձայնեց-
ման թերթը, որ ոչ ու մ է:*

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից, որպես
օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված
դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների (61 տեղ, 8441 կգ ընդհանուր քաշով,
1137083.56 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը
կազմել են 7642 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման
ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդա-
սիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավար-
տելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել
ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 մայիսի 2012 թվականի N Մ-337-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2012 թվականի մայիսի 7-ի համաձայնեց-
ման թերթը, որոշում է.*

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից, որպես
օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության
«Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված
դեղորայքի (3 տեղ, 527 կգ ընդհանուր քաշով, 815459.85 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ
արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2304.42 եվրո, «Զվարթնոց» ՍՏ) ներմուծ-
ման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդա-
սիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավար-
տելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության
կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել
ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մայիսի 2012 թվականի N Մ-338-Ա
քաղ. երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՍԿԵՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾ-
ՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2012 թվականի մայիսի 10-ի համաձայնեցման թերթը, որոշում է.

1. Բարեգործական որակել Եվրոպայի բասկետբոլի ֆեդերացիաների միջազգային ասոցիացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված 720 բասկետբոլի գնդակի (26 տեղ, 491 կգ ընդհանուր քաշով, 3249 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ